| | |
|---|---|
| **ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.137**<br>**Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-37/18»** | **PROCUREMENT CONTRACT 2.137**<br>**UNDER CODE N ""ARM-GHAPDzB-37/18"** |
| ք. Երևան «31» « 07 » 2018 թ. | Yerevan "31" "07" 2018 |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «SAF Tehnika» ԲԸ-ն, ի դեմս խորհրդի անդամ Զ.Յոզեպայի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին: | "ARMATS" closed joint-stock company, on behalf of General Director A.Gasparyan, acting on the basis of the company charter, hereinafter "Customer", on the one hand and "SAF Tehnika" joint-stock company, on behalf of Member of board Z. Jozepa, acting on the basis of the charter, hereinafter "Supplier", on the other hand, concluded the contract on the following. |
| **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**<br>1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: | **1. SUBJECT OF THE CONTRACT**<br>1.1 The Supplier shall assume responsibility to supply the Customer with the goods (hereinafter referred to as Goods) specified in Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N 1 to the contract (hereinafter referred to as Contract) in accordance with the manner, scope, time limits and address defined by the Contract and the Customer shall undertake to accept the Goods and pay for them. |
| **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**<br>**2.1 Գնորդն իրավունք ունի՝**<br>2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:<br>2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝<br>ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.<br>բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.<br>գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:<br>2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝<br>ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս | **2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES**<br>**2.1 The Customer shall have the right to:**<br>2.1.1 Where the Supplier fails to deliver the Goods within the period specified by the Contract, refuse to accept the Goods if the time limits of supply have been breached for more than 5 days.<br>2.1.2 If the Goods are of improper quality and have not been supplied in compliance with the Technical Characteristics under the Contract,<br>a) claim compensation for the costs incurred due to the improper quality of the Goods;<br>b) refuse to accept the Goods by defining at his discretion a reasonable period for the replacement of the improper Goods with Goods complying with the Contract free of charge and require the Supplier to pay the penalty under clause 6.3 of the Contract;<br>c) refuse to perform the Contract and require the Supplier to return the amount paid for the Goods.<br><br>2.1.3 If the supplied Goods are of less amount than what is specified in the contract,<br>a) require to supply the missing quantity of the |

| | |
|---|---|
| հանձնված քանակը, | Goods; |
| բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը: | b) refuse to accept and pay for the Goods and if the Goods have been paid for, require to return the paid amount and pay the fine under clause 6.2 of the Contract. |
| 2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝ | 2.1.4 If the Goods have been supplied in breach of their type requirement, by his choice: |
| ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից. | a) accept the Goods complying with the type requirement and refuse to accept the remaining part of Goods; |
| բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը. | b) refuse to accept all the delivered Goods and require to pay the fine specified in clause 6.2 of the Contract; |
| գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով: | c) require the replacement of the Goods with improper type with Goods complying with the Contract requirements free of charge. |
| 2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը: | 2.1.5 If the supply time limit is breached by the Supplier, define at his discretion a reasonable period for the supply of the Goods and require the Supplier to pay the fine set out in clause 6.2 of the Contract. |
| 2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը: | 2.1.6 Require the Supplier to compensate for the losses if the Customer within a reasonable time limit has obtained the Goods at a higher but reasonable price instead of what is stipulated by the Contract from another person following the termination of the Contract due to the contractual breach of obligation by the Supplier in the amount of difference between the transaction price and the Contract price as well as all the necessary and reasonable expenses incurred by him to acquire the Goods from another person. |
| 2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. | 2.1.7 Unilaterally terminate the Contract if the Supplier has substantially violated the Contract. |
| 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ | 2.1.7.1 Breach of the Contract by the Supplier is significant if: |
| ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում. | a) the supplied Goods are of improper quality and cannot be replaced within a timeframe acceptable for the Customer; |
| բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, | b) the time limit of the Goods supply has been violated for more than 10 days. |
| 2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին: | 2.1.8 Consider the Goods and if any discrepancies are discovered, immediately notify the Supplier about it. |
| **2.2 Գնորդը պարտավոր է՝** | **2.2 The Customer shall be obliged to:** |
| 2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի | 2.2.1 Take all the necessary actions for the acceptance of the Goods supplied in accordance |

| | |
|---|---|
| ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները: | with the Contract. |
| 2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին: | 2.2.2 In case of refusing to accept the Goods delivered by the Supplier in accordance with the Contract, ensure the proper storage of the Goods and immediately notify the Supplier about it. |
| 2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը: | 2.2.3 If the Goods delivered in the manner and time limits prescribed by the Contract are accepted, pay the Supplier the payable amounts and if the payment time limit is breached, also pay the penalty set out in clause 6.5 of the Contract. |
| 2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից: | 2.2.4 Notify the Supplier of any breach of the Contract terms related to the quantity, type or quality of the Goods, immediately after any discrepancies are discovered, or after a reasonable period of time, when the breach of the relevant Contract condition should have been discovered, proceeding from the nature and purpose of the Goods. |
| 2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները: | 2.2.5 After the termination of the Contract pursuant to clause 2.3.3 of the Contract, compensate the Supplier for the caused and duly justified losses. |
| **2.3 Վաճառողն իրավունք ունի՝** | **2.3 The Supplier shall have the right to:** |
| 2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը: | 2.3.1 Require the Customer to accept the Goods supplied in accordance with the manner, volume, time limits and address prescribed by the Contract; |
| 2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները: | 2.3.2. Require the Customer to pay him the payable amounts for the accepted Goods supplied in accordance with the manner, volume, time limits and address prescribed by the Contract. |
| 2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը: | 2.3.3 Unilaterally terminate the Contract if the Customer has substantially violated the Contract. |
| 2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները: | 2.3.3.1 Breach of the Contract by the Customer is significant if the terms of the payment for the Goods have been repeatedly violated. |
| 2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը: | 2.3.4 Deliver the Goods before the due time upon the Customer’s consent. |
| **2.4 Վաճառողը պարտավոր է՝** | **2.4 The Supplier shall be obliged to:** |
| 2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով: | 2.4.1 Deliver Goods to the Customer according to the manner, volume, time limits and address prescribed by the Contract. |
| 2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում: | 2.4.2 Ensure the supply of Goods within the time limit set by the Customer under clauses 2.1.2 (b) and (or) 2.1.5 of the Contract. |

| | |
|---|---|
| 2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք: | 2.4.3 Deliver Goods to the Customer free from rights of third parties. |
| 2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր: | 2.4.4 Deliver Goods to the Customer according to the quality, quantity, time limits and address prescribed by the Contract and if the Customer requires, provide documents, certifying the quality of Goods, defined by the RA legislation. |
| 2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը: | 2.4.5 If the supply is incomplete, rectify the discrepancies according to the manner prescribed by the Contract. |
| 2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը: | 2.4.6 Take back the Goods accepted for storage by the Customer pursuant to clause 2.2.2 of the Contract or dispose of it in a reasonable timeframe and compensate for the costs required for the storage, disposal or return of the Goods to the Supplier. |
| 2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը: | 2.4.7 In the cases covered by the Contract pay the fine and penalty set out in clauses 6.2 and 6.3. |
| 2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը: | 2.4.8 Deliver the Goods accessories and related documents to the Customer. |
| 2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները: | 2.4.9 Compensate the Customer for the caused and duly justified losses after the termination of the Contract in accordance with clause 2.1.7 of the Contract. |
| 2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին: | 2.4.10 In case of starting liquidation or bankruptcy process during the Contract performance period, notify the Customer in writing in advance. |
| **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ** | **3. CONTRACT PRICE AND PAYMENT ORDER** |
| 3.1 Պայմանագրի գինը կազմում է **19 280.60 (տասնինը հազար երկու հարյուր ութսուն** Եվրո և **վաթսուն ցենտ)** (այսուհետ՝ Պայմանագրի գին): Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:<br>Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը: | 3.1 The price of the Contract is **19 280.60 (nineteen thousand two hundred and eighty Euro, sixty cent)** (hereinafter the Contract price). The price includes all the payments (expenses) to be carried out by the Supplier for the provision of Contract implementation, including the taxes, duties, shipment, insurance costs, premiums and the expected profit.<br>The price for the supply of Goods is fixed and the Supplier shall not have the right to require to increase and the Customer shall not have the right to require to reduce the price. |
| 3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: | 3.2 The Customer shall make a noncash payment for the supplied Goods through transferring the financial resources to the |

| | |
|---|---|
| Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: | Supplier's account number. The transfer of the financial resources shall be carried out based on the delivery-acceptance protocol in the amount and months defined by the payment schedule (under Appendix N2) of the Contract. |
| **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**<br>4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակը և պետք է ներկայացնի սարքավորումների համապատասխանության հավաստագրեր (сертификат соответствия):<br>4.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարված սարքավորումներում կհայտնաբերվեն թերություններ և անսարքություններ, Վաճառողը խորհրդակցելով Գնորդի հետ, ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում, իր հաշվին վերացնում է սարքավորման բաղադրամասերի և ծրագրային ապահովման անսարքությունները: Այն դեպքում, երբ անսարք բաղադրամասի վերանորոգումը նշված ժամկետում անհնար է, Վաճառողը այդ ընթացքում առանց լրացուցիչ գումարի տրամադրում է պահուստային բաղադրամաս (բաղադրամասեր) Գնորդին՝ օգտագործման համար:<br>4.3 Ռադիոռելեային կայանի ծառայության ժամկետը՝ համաձայն արտադրողի կողմից ներկայացվող շահագործատեխնիկական փաստաթղթերի՝ պետք է լինի ոչ պակաս, քան 10 տարի:<br>4.4 Պայմանագրի կատարման ավարտից հետո Վաճառողը պարտավորվում է ապահովել սարքավորումների հետերաշխիքային սպասարկում 10 (տասը) տարվա ընթացքում՝ մինչև 2028թ. դեկտեմբերի 15-ը, ընդ որում սարքավորումների հետերաշխիքային սպասարկումը պետք է իրականացվի Գնորդի կողմից դիմելու դեպքում, որի վերաբերյալ կնքվում է պայմանագիր: Հետերաշխիքային սպասարկման պայմանագիրը պետք է ընդգրկի արտադրողից մատակարարված կամ նախկինում ձեռքբերված բոլոր սարքավորումների և նրա բաղադրամասերի վերանորոգումը, փոխարինումը, համակարգերի ծրագրային ապահովման վարումն ու թարմացումը:<br>4.5 Շահագործատեխնիկական բոլոր փաստաթղթերը պետք է լինեն ռուսերեն և անգլերեն լեզուներով և պետք է ներկայացվեն երկու տարբերակով՝ թղթային և էլեկտրոնային տեսքով:<br>Ծրագրային ապահովման փաթեթը պետք է գրված | **4. QUALITY OF GOODS AND WARRANTY**<br>4.1 The Supplier shall ensure the quality of the supplied Goods and submit certificates of conformity of the Equipment.<br>4.2 The duration of the Goods warranty period starts immediately after the acceptance of Goods by the Customer and endures 365 days.<br>If within the warranty period any deficiencies and defects are revealed in the supplied Goods, the Supplier, consulting with the Customer, in a reasonable period, however, no later than within 30 working days, rectifies the deficiencies of software and hardware items at his own expense. Whenever it is impossible to do the repair of the faulty items within the mentioned period, the Supplier provides the Customer with a respective spare part (parts) without extra cost.<br>4.3 Service life of the radio relay station according to the producer's technical documentation shall be no less than 10 years.<br>4.4 After the completion of the Contract implementation, the Supplier shall undertake to provide post-warranty service for the Equipment within 10 (ten) years, until December 30, 2028, moreover the post-warranty service of the Equipment shall be provided upon the Customer's request for which a contract shall be concluded.<br>Post-warranty service contract shall cover the repair, replacement, software maintenance and upgrade of the Equipment and parts supplied or previously purchased from the manufacturer.<br>4.5 All operational-technical documents shall be in Russian and English as well as submitted in two versions - in hard copy and electronic form.<br>The software package shall be written on the |

| | |
|---|---|
| լինի օպտիկական CD կամ DVD կրիչի վրա ֆիրմային լոգոտիպով և ունենա ֆիրմային փաթեթավորում: | optical CD or DVD drive with the company logo and have a branded packaging. |
| **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**<br>5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:<br>Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):<br>5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:<br>5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: | **5. DELIVERY AND ACCEPTANCE OF THE GOODS**<br>5.1 The Customer and the Supplier shall bilaterally sign a delivery-acceptance protocol on the outcome of the supplied Goods. The fact of delivering the Goods to the Customer shall be established by a mutually confirmed document between the Customer and the Supplier with the indication of the date the document has been drawn up.<br>The Supplier till and including the Goods supply deadline date shall submit to the Customer the document certifying the actual delivery of the supplied Goods to the Customer (Appendix N 3.1) signed on his behalf and also a delivery-acceptance protocol (Appendix N 3) through armeps system of electronic procurements (guidelines are set up in "Electronic Purchases" section at www.procurement.am). Moreover, the Supplier shall approve the delivery-acceptance protocol with an electronic digital signature completing only the relevant fields (the procedure for completing is set up in **Legislation ● Finance Minister Orders section** at www.procurement.am).<br>5.2 If the supplied Goods comply with the Contract terms and conditions, the Customer shall sign and submit the delivery-acceptance protocol and the positive opinion on the contract implementation results to the Supplier through the electronic procurement armeps system within 10 working days following the receipt of the documents prescribed by clause 5.1 of the Contract.<br>5.3 If the supplied Goods or a part thereof do not comply with the Contract terms and conditions, the Customer shall not sign the delivery-acceptance protocol and return the protocol and the negative opinion on the contract implementation results to the Supplier through the electronic procurement armeps system within the time limits prescribed by clause 5.2 of the Contract. For applying the conditions provided for by this clause the Customer shall |

| | |
|---|---|
| Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:<br>5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա-գրությունը:<br>5.5 Պայմանագրով նախատեսված Սարքավորումների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Գնորդին գործարանային ստուգումների ավարտից և Վաճառողի կողմից Սարքավորումների արտահանման գործընթացից հետո՝ մինչև ՀՀ սահմանը հատելը: Գնորդն իր ուժերով և իր հաշվին իրականացնում է Սարքավորումների մաքսազերծումը և դրա հետ կապված բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ծախսերն ու վճարումները: | take measures foreseen by the Contract for such cases to settle the issue and apply responsibility measures under the Contract towards the Supplier.<br><br>5.4 If the Customer does not accept or does not refuse to accept the Contract result within the period defined by clause 5.2 of the Contract, the result is considered as accepted and the Customer shall submit the delivery-acceptance protocol confirmed thereby to the Supplier through the electronic procurement system on the following day after the deadline date defined by clause 5.2 of the Contract.<br><br>5.5 The property right of the Equipment under the Contract is transferred to the Customer after the completion of the Factory Acceptance Tests and the delivery of the Equipment made by the Supplier-before crossing the RA border. The customs clearance of the Equipment, expenses and payments of the related taxes, duties and mandatory fees shall be carried out by the Customer at his own expenses and power. |
| **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ** | **6. RESPONSIBILITIES OF THE PARTIES** |
| 6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:<br>6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:<br>6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<br>6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:<br>6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար | 6.1 The Supplier bears responsibility for the quality and supply time limits of the delivered Goods according to the Contract requirements.<br><br>6.2 If the Goods supply period under the Contract is breached by the Supplier, for each delayed day the Supplier shall pay penalty amounting to 0,05% (zero-point-zero-five) percent of the Goods price calculated towards the price of non-supplied part of the Goods.<br><br>6.3 For each case if the Goods are not supplied in compliance with the Technical Characteristics under clause 1.1 of the Contract, the Supplier shall pay fine amounting to 0,5%(zero-point-five) percent of the Contract price.<br><br>6.4 The penalties and fines defined in clauses 6.2 and 6.3 of the Contract are calculated and transferred together with the sums payable to the Supplier.<br>6.5 If the Customer breaches the time limit under clause 3.2 of the Contract, the Customer shall pay a penalty calculated for each day of the delay, |

| | |
|---|---|
| հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:<br>6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:<br>6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց: | however, in the amount of 0,05(zero-point-zero-five) percent of the unpaid amount.<br><br>6.6 In the cases not covered by the Contract if the Parties fail to perform or properly perform their obligations, they bear responsibility in the order determined by the RA legislation.<br><br>6.7 The payment of penalties and (or) fines does not release the Parties from the performance of their contractual obligations. |
| **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**<br>Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: | **7. FORCE MAJEURE**<br><br>The Parties are exempted from liability for the full or partial non-performance of their obligations under this Contract if it has happened due to a force majeure which has occurred after the Contract signature and which the Parties could not predict or prevent.<br>Such events are earthquakes, floods, fires, war, announcement of military and emergency situations, political unrest, strikes, communication failures, acts of government bodies, etc., that lead to non-fulfillment of their obligations under this Contract.<br>If force-majeure endures more than 3 (three) months, either Party shall have the right to terminate the Contract informing the other Party about it in advance. |
